ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կառավարում,
բակալավրիատ, 3-րդ կուրս

ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ. ՄԻ՞Ֆ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ, տեխնոլոգիատարություն, տնտեսական աճ, բազմազանեցում*

Սույն հոդվածում ուսումնասիրվել են արտաքին առևտրի կառուցվածքը և վերջին տարիներին արձանագրված շարժընթացը: ՀՀ ՎԿ-ի, ԿԲ-ի և ՊԵԿ-ի կողմից հրապարակված տվյալների հիման վրա հաշվարկվել է ՀՆԱ-ում արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը, ուսումնասիրվել է արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ ըստ տեխնոլոգիատարության և առանձին արտադրատեսակների, գնահատվել է արտաքին առևտրի ոլորտում կատարված գործունեության դերը տնտեսական աճի ապահովման գործընթացում, առաջարկվել են արտահանման և ներմուծման կառուցվածքը բազմազանեցնելու ուղիներ:

Ներածություն: Հայտնի է, որ ներկայիս գլոբալացման պայմաններում, տնտեսական աճի ապահովման ներքին գործոններից զատ, մեծ կարևորություն են ստանում նաև արտաքին գործոնները: Հատկապես ՀՀ-ի նման ներքին սահմանափակ պահանջարկ ունեցող երկրների համար երկարատև զարգացման շարժիչ ուժ է արտաքին պահանջարկը՝ արտահանումը: Համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու տեսանկյունից արտաքին առևտրի ոլորտում ՀՀ ներուժը բավարար արդյունավետությամբ չի օգտագործվում: Այսօր այդ գործընթացն ավելի է դժվարանում՝ պայմանավորված կորոնավիրուսային համաճարակի ազդեցությամբ, երկրի ներքաղաքական իրավիճակով և, իհարկե, պատերազմի հետևանքներով: Արտաքին առևտրի ոլորտում շարունակում ենք բախվել բավականին լուրջ խնդիրների, որոնց լուծումը թույլ կտա ներցիոն տնտեսական աճի փոխարեն արձանագրել երկարաժամկետ ներառական տնտեսական աճ:

Գրականության ակնարկ: Գլոբալացման արդի պայմաններում, տնտեսական աճն ապահովող ներքին գործոններին զուգահեռ, կարևորվում են նաև արտաքին գործոնները, մասնավորապես՝ ՀՀ տնտեսության համար առանձնակի նշանակություն ունի արտաքին պահանջարկը՝ արտահանումը: Բացի նրանից, որ արտահանումը ՀՆԱ-ի մի մասն է, և վերջինիս ծավալի աճն ուղիղ համեմատական է արտահանման ծավալին, այն նաև արտարժութային եկամտի աղբյուր է և փոքր տնտեսությունը կարողանում է մղել դեպի մեծ շուկաներ: Սակայն, երևույթն ունի նաև իր բացասական կողմը. արտահանման մեծ ծավալները երբեմն հանգեցնում են տնտեսական աճի կախվածությանը արտաքին աշխարհի փոփոխվող պայմաններից[1]: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովում են այն երկրները, որոնց արտահանման կառուցվածքում գերակշռում են բարձր տեխնոլոգիատարության ապրանքները[2]: Մյուս կողմից, տնտեսական աճի և կայուն զար-

[1] Տե՛ս United Nations Development Programme "Towards Human Resilience: Sustaining MDG Progress in an Age of Economic Uncertainty", 2011, էջ 20-25:
[2] https://www.redalyc.org/pdf/342/34202807.pdf

գացման համար կարևոր է տնտեսության բազմազանեցման, այլ ոչ թե մասնագիտացման ռազմավարության որդեգրումը[1]: Արտահանման բազմազանեցումը հնարավորություն կտա մեղմելու տնտեսության վրա շուկայական իրադրության բացասական ազդեցությունը և տնտեսական մանևրներ իրականացնելու: Մատնանշվում է բազմազանեցման 2 տեսակ՝ ուղղահայաց և հորիզոնական[2]: Ուղղահայաց բազմազանեցումը ենթադրում է նոր ապրանքատեսակների յուրացում՝ օգտագործելով նախկինում հումքի կամ կիսաֆաբրիկատների ձևով արտահանվող ապրանքները, հորիզոնականը ենթադրում է շուկայում այնպիսի ապրանքների մուտք, որոնք նախկինում չեն եղել: Արտահանման և ներմուծման կառուցվածքի վրա մեծ ազդեցություն ունի նաև գիտատեխնիկական առաջընթացը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում վերլուծվել են արտաքին առևտրի հետ կապված հիմնական ցուցանիշները, ժամանակային շարքերը և կառուցվածքը: Արտաքին առևտրի կառուցվածքն ուսումնասիրելու համար օգտվել ենք ՀՀ ՎԿ-ի, ԿԲ-ի և ՊԵԿ-ի կողմից հրապարակված տվյալներից: Հիմնական վերլուծություններն իրականացվել են դիտարկվող ցուցանիշների շարժընթացի, համամասնությունների, հարաբերակցությունների ժամանակային շարքերի դիտարկման միջոցով: Հիմնական մեթոդաբանական հիմքը հետևյալ մեթոդների ամբողջությունն է.

- համակարգման մեթոդ. արտաքին առևտրի կարգավորման հիմնախնդիրները դիտարկվել են որպես փոխկապակցված տարրերի ամբողջություն:
- Վիճակագրական մեթոդ. սույն մեթոդի շնորհիվ վերլուծության են ենթարկվել արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ ըստ առանձին ապրանքատեսակների խմբերի, ՀՀ ՎԿ, ՊԵԿ հրապարակած տվյալները:
- Համեմատական մեթոդ. ենթադրում է տարբեր ժամանակահատվածներում արտաքին առևտրի կառուցվածքի համադրում և հիմնախնդիրների բացահայտում:
- Վերլուծական մեթոդ. այն արտահանման և ներմուծման ժամանակային շարքերի, բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղիների վերլուծություն է:

Ներկայացված մեթոդաբանությամբ կատարված հետազոտության ու վերլուծությունների արդյունքում բացահայտվել են արտաքին առևտրի կառուցվածքում որոշ ապրանքատեսակների կենտրոնացվածությունը, առաջարկվել են կառուցվածքն ավելի բազմազանեցնելու ուղիներ:

Վերլուծություն: Արտահանման և ներմուծման ազդեցությունը ՀՆԱ-ի վրա արտահայտվում է ՀՆԱ-ում դրանց տեսակարար կշիռների միջոցով: Դիտարկենք արտաքին առևտրաշրջանառության բաղադրիչների և ՀՆԱ հարաբերակցության շարժընթացը 2016–2020 թթ.:

Գծապատկեր 1-ից երևում է, որ 2016-2019 թթ. ապրանքաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցությունն ունեցել է աճի միտում, սակայն 2020 թ., 2019-ի համեմատ, ապրանքաշրջանառության կառուցվածքում գրանցվել է անկում (13% կամ 1065.9 մլն ԱՄՆ դոլար)՝ պայմանավորված կորոնավիրուսային համաճարակի ազդեցությամբ:

---

[1] Տե՛ս **Kemenya T., Storpera M.**, Is Specialization Good for Regional Economic Development? // Department of Geography & Environment, London School of Economy, London, 08 May 2014, էջ 12:

[2] Տե՛ս **Портер М.**, Конкурентная стратегия. Методика анализа отраслей и конкурентов. М., “Альпина Паблишер”, 7-е издание, 2017, էջ 269:



Գծապատկեր 1. ***Արտաքին առևտրաշրջանառության բաղադրիչների և ՀՆԱ-ի հարաբերակցության շարժընթացը (տոկոս)***[1]

Ընդ որում, 2020 թ., նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, ներմուծման ոլորտում ունեցել ենք անկում (17.2% կամ 954.3 մլն ԱՄՆ դոլար), իսկ արտահանման ոլորտում՝ չնչին աճ (4.2% կամ 111.6 մլն ԱՄՆ դոլար): Հավելենք, որ 2021 թ. հունվար-հունիս ամիսներին արտահանումը կազմել է 1433.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցելով 18% աճ (հիմնականում հանքահումքային մթերքներ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, բուսական ծագման արտադրանք, մանածագործական իրեր, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք ապրանքախմբերի գծով), իսկ ներմուծումը՝ 1948.6 մլն ԱՄՆ դոլար՝ գրանցելով 8.3% աճ (հիմնականում հանքահումքային մթերքներ, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, մանածագործական իրեր, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր ապրանքախմբերի գծով)[2]: Առանձնակի նշանակություն ունի արտահանման և ներմուծման կառուցվածքի ուսումնասիրությունը՝ ըստ տեխնոլոգիատարության՝ դասակարգված ապրանքային 4 խմբում՝ ռեսուրսատար, ցածր տեխնոլոգիատար, միջին տեխնոլոգիատար, բարձր տեխնոլոգիատար: ՀՀ-ի համար արտահանման կառուցվածքում ռազմավարական նշանակություն ունեն հատկապես միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքները: Ցավոք, մեր արտահանման կառուցվածքում ունենք հակառակ պատկերը: 2016-2020 թթ. արտահանման ծավալներն ապահովվել են ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների հաշվին (2016-2020 թթ. ցուցանիշը տատանվել է 91.9%-ից (2019 թ.) 94.7% (2016 թ.) միջակայքում), իսկ միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքները կազմել են ողջ արտահանման շատ փոքր մասը (դիտարկվող ժամանակաշրջանում 5.3%-ից (2016 թ.) 8.1% (2019 թ.) միջակայքում, *աղյուսակ 1*):

[1] Կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա:
[2] Տե՛ս ՀՀ ԿԲ, ՀՀ վճարային հաշվեկշիռը 2021 թ. հունվար-հունիսին:

Աղյուսակ 1

Արտահանումը և ներմուծումը՝ ըստ տեխնոլոգիատարության (մլն ԱՄՆ դոլար),
թավ տողում նշված են տեսակարար կշիռները ողջ արտահանման/ներմուծման մեջ (տոկոս)[1]

Թվական	Արտահանում			Ներմուծում		
	№ 1	№ 2	№ 3	№ 1	№ 2	№ 3
2016	572.5	1123.5	95.7	893.6	1243.3	1136.6
%	32.0	62.7	5.3	27.2	38.0	34.8
2017	790.5	1311.4	135.8	1044.4	1556.9	1495.8
%	35.3	58.6	6.1	25.5	38.0	36.5
2018	769.1	1478.7	164.6	1154.4	1887.1	1934.0
%	31.9	61.3	6.8	23.2	37.9	38.9
2019	886.3	1548.5	213.8	1267,6	1890.2	2379.8
%	33.5	58.4	8.1	22.9	34.1	43.0
2020	1012.6	1362.2	162.2	1189.6	1598.9	1794.8
%	39.9	53.7	6.4	26.0	34.9	39.1

Աղյուսակ 1-ից հստակ երևում է, որ ներկայումս մեր արտահանման կառուցվածքը միտված է դեպի ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքներ, ինչն ընդգծում է արտահանման խոցելիությունը: Բացի դրանից, վերոնշյալ ապրանքները ենթակա են համաշխարհային շուկայում գնային զգալի փոփոխությունների և, բարձր տեխնոլոգիատարության ապրանքների համեմատ, ունեն ցածր գին: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս իր տնտեսական քաղաքականությամբ կողմնորոշված է դեպի ներմուծում: Ներմուծման կառուցվածքը, ըստ տեխնոլոգիատարության, կենտրոնացված չէ (աղյուսակ 1): Այն ընդգծում է մեր կախվածությունը միջազգային շուկայից թե՛ ռեսուրսատար, թե՛ ցածր տեխնոլոգիատար և թե՛ միջին ու բարձր տեխնոլոգիատար ապրանքների գծով: Հատկանշական է, որ ներմուծման ծավալում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքները (34.8%-ից (2016 թ.) 43% (2019 թ.) միջակայքում), որոնք համաշխարհային շուկայում ունեն համեմատաբար բարձր գին (աղյուսակ 1): Այս համատեքստում անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսին է արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ ըստ ապրանքատեսակների: Միգուցե, արտահանումը մասնագիտացվա՞ծ է, ոչ թե բազմազանեցված: Ուսումնասիրելով արտահանման կառուցվածքը՝ ըստ ապրանքատեսակների, նկատում ենք, որ դիտարկվող ժամանակաշրջանում արտահանման կեսից ավելին բաժին է ընկել մի քանի արտադրատեսակների (աղյուսակ 2), այսինքն՝ արտահանման կառուցվածքը մասնագիտացված է, ոչ թե բազմազանեցված:

[1] Ցուցանիշները հաշվարկել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա.
№ 1 - ռեսուրսատար ապրանքներ
№ 2 - ցածր տեխնոլոգիատարության ապրանքներ
№ 3 - միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ

Աղյուսակ 2

Որոշ ապրանքների արտահանման ծավալներն ու շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար), *թավ տողում նշված են տեսակարար կշիռները ողջ արտահանման մեջ (տոկոս)*[1]

Տարի	Արտադրատեսակ						Ընդ.
	Ոգելից խմիչքներ	Ծխախոտ	Հանքաքար	Թանկարժեք քարեր	Սև մետաղ	Այլումին	
2016	166.2	209.6	400.5	336.4	62.3	84.9	1259.9
%	9.3	11.7	22.4	18.8	3.4	4.7	70.3
2017	231.5	237.8	598.7	290.5	84.7	101.9	1545.1
%	10.3	10.6	26.8	13.0	3.8	4.6	69.1
2018	219.7	267.6	557.1	307.4	126.5	96.1	1574.4
%	9.1	11.1	23.1	12.8	5.2	4.0	65.3
2019	281.6	290.5	665.1	414.7	149.6	99.5	1901.0
%	10.6	11.0	25.1	15.6	5.6	3.8	71.7
2020	227.5	256.5	733.4	368.8	105.0	104.7	1795.9
%	9.0	10.1	28.9	14.5	4.1	4.1	70.7

Փաստորեն, ՀՀ-ում արտահանման մասնագիտացված ոլորտներն են հումքի և թանկարժեք ու ոչ թանկարժեք քարերի, մետաղների ոլորտները, իսկ այս ամենի վրա հիմնված արտահանումն ամենևին էլ երկարաժամկետ ներառական տնտեսական աճի գրավական չէ: Արտահանման բազմազանեցված կառուցվածքից զատ, հարկ է նշել, որ արտահանման ծավալներում գերակշռում է միջանկյալ հումքը, որի՝ արտադրությունում ստեղծված ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և ենթակա է միջազգային շուկայում գնի զգալի փոփոխության, ինչն ավելի է ընդգծում արտահանման խոցելիությունը: Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքատեսակների ուսումնասիրելով՝ արձանագրում ենք, որ ներմուծման ծավալներում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն վերջնական սպառման բարիքները և հանքային վառելանյութերը (աղյուսակ 3), ինչի հետևանքով այսօր այդ ապրանքների գները ՀՀ-ում բավականին բարձր են:

Աղյուսակ 3

Որոշ ապրանքների ներմուծման ծավալներն ու շարժընթացը (մլն ԱՄՆ դոլար), *թավ տողում նշված են տեսակարար կշիռները ողջ ներմուծման մեջ (տոկոս)*[2]

Տարի	Արտադրատեսակ						Ընդ.
	Ծխախոտ	Հացահատիկ	Հանքային վառելիք	Թանկարժեք քարեր	Տրանսպորտ. միջոցներ	Միս	
2016	101.3	71.7	568.6	161.4	104.8	46.9	1054.7
%	3.1	2.2	17.4	4.9	3.2	1.4	32.2
2017	74.1	79.1	626.9	233.3	244.2	70.98	1328.5
%	1.8	1.9	15.3	5.7	6.0	1.7	32.4
2018	130.4	83.5	677.9	288.2	344.4	68.3	1592.7
%	2.6	1.8	13.6	5.8	6.9	1.4	32.1
2019	149.5	73.6	765.5	299.7	747.7	82.0	2118.0
%	2.7	1.3	13.8	5.4	13.5	1.4	38.1
2020	127.1	96.9	719.3	143.6	180.9	57.1	1324.9
%	2.8	2.1	15.7	3.1	3.9	1.3	28.9

Սակայն, գների մակարդակի բարձր լինելու փաստից զատ, ավելի էական է այն, որ այս խնդիրը չլուծելու դեպքում ապագայում կարող ենք առընչվել

[1] Ցուցանիշները հաշվարկել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա:
[2] Ցուցանիշները հաշվարկել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա:

պարենային անվտանգության խնդրին: Ուշագրավ է, որ դիտարկվող ժամանակահատվածում և՛ արտահանման, և՛ ներմուծման կառուցվածքում բացարձակ արտահայտությամբ բավականին մեծ տեղ է զբաղեցնում «Թանկարժեք քարեր» ապրանքատեսակը, թեև Հայաստանն ամենևին էլ հարուստ չէ թանկարժեք քարերով (աղյուսակ 2, աղյուսակ 3): Խնդիրը հետևյալն է. թանկարժեք քարերը ներմուծվում են, Հայաստանում վերամշակվում և արտահանվում (գլխավոր գործընկերներն են Բելգիան և Իրանը, հիմնականում՝ ադամանդի և անմշակ ոսկու գծով)[1]:

Ըստ աղյուսակ 3-ի՝ տրանսպորտային միջոցների ներմուծման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում գրանցել են աճի միտումներ՝ բացառությամբ 2020 թվականի (2019-ի համեմատ կրճատվել է 313,3%-ով կամ 566.8 մլն ԱՄՆ դոլարով), ինչը պայմանավորված էր կորոնավիրուսային համաճարակի շրջանում այլ երկրների տարածք մուտք գործելու արգելքով:

Հավելենք նաև, որ 2019 թ. գրանցվել է տրանսպորտային միջոցների ներմուծման կտրուկ աճ (2018-ի համեմատ՝ 217.1%-ով կամ 403.3 մլն ԱՄՆ դոլարով), որը պայմանավորված էր ֆիզիկական անձանց կողմից մեծ քանակությամբ տրանսպորտային միջոցների ներմուծմամբ և վերավաճառքով (ընդհանուր տրանսպորտային միջոցների 59.5%-ը կամ 444.9 մլն ԱՄՆ դոլար)[2], ինչն էլ 7.6% տնտեսական աճի ապահովման մեջ մեծ դեր է խաղացել: Վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ արտաքին առևտրի միջոցով ապահովված տնտեսական աճը եղել է անհեռանկարային ճյուղերի միջոցով, ինչը տալիս է զուտ քանակական, և ոչ որակական արդյունքներ:

Եզրակացություն: ՀՀ Կառավարության 2019 թ. ծրագրում ամրագրված է. «Ապրանքների և ծառայությունների արտահանման զգալի աճը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչը: Ծրագրի ավարտին ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է կազմի 43-45%...»[3]: Այսօր ՀՀ-ն շատ հեռու է այդ ցուցանիշից, քանի որ առկա են բազմաթիվ խնդիրներ: Արտաքին առևտրի ոլորտը, մասնավորապես՝ արտահանումը, երկրի տնտեսության հիմնական շարժիչը դարձնելու նպատակով առաջարկում ենք հետևյալ ուղիները՝

1. բազմազանեցված արտահանում՝ մասնագիտացված արտահանման փոխարեն, որտեղ մեծ դերակատարում կունենա ծառայությունների և ՏՏ արտահանումը:
2. Միջազգային շուկայում հայկական ապրանքների՝ որպես բրենդ դիրքավորումը, ինչը կնպաստի մրցունակության բարձրացմանը:
3. Արտահանման ոլորտը փոխել ցածր տեխնոլոգիատարությունից դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ:
4. Վերջնական սպառման բարիքներ արտադրողներին և գյուղատնտեսությամբ զբաղվողներին խթանելով և խրախուսելով՝ տնտեսությունը հագեցնել նշված բարիքներով, կրճատել դրանց ծավալները ներմուծման մեջ, որոշ չափով ապահովել պարենային անվտանգության խնդիրը:

Ի վերջո, եթե ցանկանում ենք ունենալ տնտեսություն, որտեղ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը կլինի արտահանումը, ապա, առաջին հեր-

---

[1] Տե՛ս ՀՀ ՊԵԿ, ՀՀ արտաքին առևտուրն առանձին երկրների կտրվածքով:

[2] Տե՛ս ՀՀ ՎԿ, ՀՀ արտաքին առևտուրը 2019 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության անվանացանկի 10 նիշ դասակարգման):

[3] Տե՛ս ՀՀ Կառավարության ծրագիր, 2019, էջ 44-45:

թին, անհրաժեշտ է մասնագիտացումը փոխել բազմազանեցմամբ, արտահանումը կողմնորոշել դեպի բարձր տեխնոլոգիատար ապրանքներ՝ միաժամանակ չանտեսելով ներմուծման ոլորտում առկա խնդիրները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաջանյան Գ., Թադևոսյան Զ. և այլք, Միջազգային տնտեսական հարաբերություններ//ուսումնական ձեռնարկ, Եր., 2008, 296 էջ:
2. Եղիազարյան Ա., Հայաստանում տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծություն, «Լույս» հիմնադրամ, Եր., 2020, 15 էջ:
3. Տնտեսական զարգացման նախաձեռնությունների կենտրոն, Արտահանման կառուցվածքը 2014-2019 թթ.:
4. ՀՀ Կառավարության ծրագիր, 2019 թ., փետրվարի 8:
5. ՀՀ ԿԲ, ՀՀ վճարային հաշվեկշիռը 2021 թ. հունվար-հունիսին:
6. ՀՀ ՎԿ, ՀՀ արտաքին առևտուրը 2016-2020 թթ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության անվանացանկի 10 նիշ դասակարգման):
7. ՀՀ ՊԵԿ, ՀՀ արտաքին առևտուրը 2016-2020 թթ.առանձին երկրների կտրվածքով:
8. Портер М., Конкурентная стратегия. Методика анализа отраслей и конкурентов, М., “Альпина Паблишер”, 7-е издание, 2017.
9. Смит А., Исследование характера и причин национального богатства, М., “Политиздат”, 1962.
10. Kemenya T., Storpera M., Is Specialization Good for Regional Economic Development? // Department of Geography & Environment, London School of Economics, London, 08 May 2014.
11. Samuelson P., Factor proportions and the Heksher-Ohlin Theorem “Economic journal”, 1984.
12. https://www.gov.am/files/docs/3133.pdf
13. https://www.armstat.am/am/?nid=12
14. https://www.petekamutner.am/
15. https://www.cba.am/am/SitePages/Default.aspx
16. https://unstats.un.org/unsd/classifications/Family/Detail/1070?fbclid=IwAR23h3V54sC0Ft7FaONAtBeei8rAkUIf_NN09wJhJTmkuzmvCIxffE2exGs

ГРАЧЬЯ ОГАННЕСЯН
Менеджмент, бакалавриат, 3-й курс

ЭКСПОРТ АРМЕНИИ КАК ДВИЖУЩАЯ СИЛА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА: МИФ ИЛИ РЕАЛЬНОСТЬ?

Ключевые слова: *экспорт, импорт, торговый баланс, экономический рост, диверсификация*

В статье рассматривается структура и зафиксированная в последние годы динамика внешней торговли,. На основе данных, опубликованных СК, ЦБ и ТДК РА рассчитан удельный вес экспорта и импорта в ВВП, изучена структура экспорта и импорта по технологическому потенциалу и по отдельным видам товаров. Оценена роль осуществленной деятельности в сфере внешней торговли в обеспечении экономического роста. Предложены пути диверсификации структуры экспорта и импорта.

HRACHYA HOVHANNISYAN
Management, Bachelor's Degree, 3-rd Year

Keywords: *export, import, trade balance, economic growth, diversification*

EXPORT OF ARMENIA AS THE MAIN DRIVING FORCE OF ECONOMIC GROWTH. MYTH OR REALITY?

The article examines the structure and dynamics of foreign trade in recent years. The share of export-import in the GDP was calculated on the basis of the data published by the RA CC, CB, SRC. The structure of export-import has been studied, according to separate products and the technological capacity. The role of foreign trade activities in ensuring economic growth has been assessed and ways to diversify the structure of exports and imports have been suggested.

ԷԼԻԶԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ
Վիճակագրություն,
բակալավրիատ, 2-րդ կուրս

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հիմնաբառեր. *COVID-19, պատվաստում, արդյունավետության գնահատում, կոռելյացիոն վերլուծություն*

Նոր կորոնավիրուսային վարակը (COVID-19), որը համաճարակի բնույթ է ստացել՝ սկսած 2020 թվականի մարտից, շարունակում է արագորեն տարածվել՝ չնայած ամբողջ աշխարհում ուժեղացված կանխարգելման և բուժման ջանքերին: COVID-19-ի դեմ պայքարի ամենախոստումնալից մեթոդներից է պատվաստումը: Ներկայումս համավարակի դեմ բնակչության պատվաստման ակտիվ գործընթաց է իրականացվում, որի արդյունավետության գնահատումը օրակարգային նշանակություն ունի:

Սույն հոդվածում վիճակագրական գործիքակազմի կիրառմամբ գնահատվել է կորոնավիրուսի դեմ պատվաստումների արդյունավետությունը՝ վարակվածության և մահացության մակարդակների վրա ազդեցության համատեքստում:

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները փաստում են, որ պատվաստումների գործընթացը չի լուծել իր առջև դրված խնդիրները:

Ներածություն: Վերջին ամիսներին ամբողջ աշխարհում իրականացվում է կորոնավիրուսի դեմ պատվաստումների զանգվածային արշավ: Սկզբում պատվաստանյութ մշակողները խոստացել էին 90-95% պաշտպանություն վարակի դեմ և զանգվածային իմունիտետի ձևավորում: Հետո խոսվեց այն մասին, որ պատվաստանյութերը գուցե լիովին չպաշտպանեն վարակից, բայց անպայման կպաշտպանեն հիվանդության բարդություններից և մահից: Մի խոսքով՝ բոլոր պատվաստանյութերն արդյունավետ են, անվտանգ և ծառայում են հանրային բարօրությանը: Հնչում են նաև ուղիղ հակառակ դատողություններ: Հատկանշական է, որ երկու կողմերն էլ չունեն համոզիչ բժշկական հիմնավորում: